«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 67/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 02.12.2021թ. ժամը 17:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝19.11.2021թ-ին Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված «Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Գևորգ Ռուբիկի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի գործողությունների /անգործության/,վարքագծի կանոնների չպահպանման փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Դեկտեմբերի 02-ին,ժամը 17-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝«Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊԸ ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանը:
քաղաքացի Գևորգ Ռուբիկի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Սաշիկի Մկրտչյանը:

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Դիմումատու ՝«Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊԸ ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանը:
քաղաքացի Գևորգ Ռուբիկի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Սաշիկի Մկրտչյանը և նրա ներկայացուցիչ՝ փաստաբան Սուրեն Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝19.11.2021թ-ին Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված «Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Գևորգ Ռուբիկի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի գործողությունների /անգործության/,վարքագծի կանոնների չպահպանման փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ստուգեց նիստի մասնակիցների լիազորությունները:

Սահմանված կարգի հիմքով ներկայացված դիմումի ներկայացման և իր դիրքորոշման համար համար ձայնի իրավունք տրվեց դիմումատու՝«Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանին,ով հակիրճ ներկայացրեց դիմումըմասնավորապես կենտրոնանալով ներկայացված հայարարության ձևի չպահպանման և այդ առումով պարտապանի կողմից գույքի թաքցման հանգամանքի վրա:

Սնանկության գործով կառավարիչին պատասխաններ տալու համար տրվեց ձայնի իրավունք,նրա փոխարեն պատասխաններ ներկայացրեց՝ներկայացուցիչ՝Ս.Գևորգյանը ներկայանալով հանձնաժողովին լրացուցիչ այլ փաստաթղթերի և մասնավորապես նշեց,որ օրենքով սահմանված կարգով իրականացվել է պարտապանի գույքի գույքագրումը,որին մասնակցել է պարտապանը և ստորագրելով ակտը փաստել է,որ գույքագրված գույքը ամբողջական է,իսկ հայտարարգրի ձևը չի պահպանվել քանի որ նոր կարգ է,իսկ կառավարչի կողմից նախկինում ինքնուրույն մշակված ձևով,տարիներ շարունակ վերցվել են այդ հայտարարգրերը և այս գործով էլ բացառություն չի կացմել:Կառավարիչը նշեց որ այդ ձևերի միջև մեծ տարբերություն չկա և այն փաստը,որ հայտարարգրում չի նշվել որևէ գույք,դա պարտապանի պատասխանատվության խնդիրն է,այլ ոչ թե կառավարչի:

Կառավարիչ նշեց նաև որ իր կողմից նշված գույքի հայտնաբերման վերաբերյալ գործողություններ կատարվել են,որից պարզվել է,որ ԴԱՀԿԾ-ում և ՀՀ Ոստիկանությունում նույնպես կատարողական վարույթի և քրեական գործի նախապատրաստման ընթացքում անդրադարձվել են այդ հարցին և պարզվել որ այդ գույքը պատկանել է պարտապանի մորը և իրացվել է նրա առողջական վիճակի կարգավորման ծախսերի հոգալու համար,այսինքն դիմումատուն այդ բոլորին ծանոթացել և շատ լավ տիրապետում է և անհասկանալի է թե ինչու է իր բողոքի հիմքում դրել այդ գույքերի պարտապանի կողմից հայտարարգրում չնշելու փաստը,կամ հայտարարագրի ձևում այդ տողի առկայության փաստը:

Դիմումատուն պատասխանեց,որ եթե հայտարարգրի ձևը պահպանվեր,պարտապանը ստիպված կլիներ լրացնել այդ տողը,որը հետագայում կառավարչի կողմից կիրականացվեր:

Հանձնաժողովի նախագահի հարցին թե պարտատերը այլ տեղեկություններ ունի հայտնելու այս վարույթի վերաբերյալ,պարտատերը պատասխանեց որ կառավարիչը խուսափում է նիստերին ներկայանալուց,որը իր կողմից դիտվում է որպես կառավարչի պարականություն-ների չկատարում,կամ թերի կատարում որի հետևանքով ինքը դժգոհ է կառավարչի աշխատանքից և իր դժգոհությունն է հայտնել նաև հանրային պաշտպանին:Պարտատերը հայտնեց նաև որ այլ տեղեկատվություն չունի հայտնելու հանձնաժողովին այս գործի վերաբերյալ,որից հետո հանձնաժողովի նախագահն դիմելով հանձնաժողովի անդամներին հարցով թե վկային հարցերի առկայության մասին: Հանձնաժողովի անդամները տվեցին իրենց մոտ առաջացած հարցերը վկային և ստացան համապատասխան պատասխաններ, որի հետո հանձնաժողովի նախագահն խնդրեց վկային դուրս գալ նիստերի սենյակից հանձնաժողովի աշծատանքները շարունակելու նպատակով:

Հանձնաժողովի նախագանի խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ:Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով ներկայացված փաստական հանգամանքները առկա չէ կառավարչի մեղքը,քանի որ օրենքով սահմանված բոլոր գործառույթները կառավարչի կողմից իրականացվել են,բայց դիմումատուն պնդում է,որ հայտարարագիրը պարտապանի կողմից ներկայացվել է ոչ սահմանված ձևի վրա,իսկ կառավարիչը դրա վրա ուշադրություն չի դարձրել, որի հետևանքով որոշակի գույքեր չի հայտարարգրվել և դուրս է մնացել սնանկության վարույթի շրջանակներից:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանը նշեց որ այդ գույքերի մասով առկա է քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշում,որը բողոքարկվել է դատախազություն և մնացել է ըստ էության նույնը,այսինքն չի հիմնավորվել,այդ գույքերի սեփականության հիմքերը,ուստի պարտապանի կողմից հայտարարգրում թաքցնում չի եղել:Հանձնաժողովի անդամը առաջարկեվ կարճել կարգապահական վարույթը կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ,բայց հանձնարարել կառավարչին,որ հետագայում պահպանվի Հայտարարագրի սահմանված ձևը:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ հանձնաժողովի անդամները հայտնեցին այն կարծիքը,որ եղած փասերի ուսումնասիրությամբ չկա որևէ փաստ կառավարչի անգործության վերաբերյալ,առաջարկելով կարճել կարգապահական վարույթը,կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը համաձայնելով արտահայտված կարծիքի հետ և առաջարկեց ընդունել կառավարչի բերած օբեկտիվ պատճառաբանությունները և կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և բացատրությունները և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝19.11.2021թ-ին Կարգապահական հանձնաժողովի անվամբ ստացված «Կասպիան Ուելթ Գրուպ»ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝փաստաբան Նարեկ Սամսոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Գևորգ Ռուբիկի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Սաշիկի Մկրտչյանի գործողությունների /անգործության/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 1-ին ենթակետի հիմքով՝ կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:Միաժամանակ հանձնարարել կառավարչին հետագա գործունեության ընթացքում պահպանել Հայտարարգրի սամանված ձևի օգտագործումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան